



**ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ / CRIMINAL PROCEDURE /
УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС**



ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

*իրավաբանական գիտությունների թեկնածու,
Երևան քաղաքի դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական*

BAGHDASARYAN GEVORG

*Candidate of Legal Sciences,
Prosecutor of Yerevan City, First rank counsellor of justice*

БАГДАСАРЯН ГЕВОРГ

*кандидат юридических наук,
Прокурор города Еревана, советник юстиции первого класса*



ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

*Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ, արդարադատության երրորդ դասի
խորհրդական, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ*

HOVHANNISYAN KAREN

*Senior prosecutor in Prosecutor's Office of Yerevan City, Third rank counselor of justice,
Applicant at the Chair of Criminal Law of Yerevan State University*

ОГАНЕСЯН КАРЕН

*Старший прокурор прокуратуры города Еревана, советник юстиции третьего класса,
соискатель кафедры Уголовного права Ереванского государственного университета*

**ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ***

**PROBLEM OF ACCESSIBILITY OF BANKING SECRECY IN CRIMINAL PROCEDURE OF
THE REPUBLIC OF ARMENIA***

**ПРОБЛЕМА ДОСТУПА К БАНКОВСКОЙ ТАЙНЕ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ***

Հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ տեղի ունեցող հանցավոր վարքագծի կատարելագործման հետևանքով օրեցօր մեծանում է այն հանցագործությունների թիվը, որոնց կատարման մեխանիզմում օգտագործվում են բանկային գործառնությունները: Առևտրային հարաբերությունների և վարկային համակարգի զարգացումը, բանկային ծառայությունների ծավալի մեծացումը նույնպես նպաստում են նոր՝ դրանց օգտագործմամբ հանցավոր մեխանիզմների ձևավորմանը: Հանցագործության և հանցանք կատարած անձանց բացահայտումը բարդացնելու նպատակով բազմաթիվ, այդ թվում՝ ոչ մեծ ծանրության հանցագործություններ, ինչպիսին, օրինակ, զգալի չափերով խարդախությունն է, կատարվում են բանկային հաշիվների մասին տվյալների օգտագործմամբ և դրանցով գումարների փոխանցումներ:

* Հոդվածը ներկայացվել է 08.11.2019, գրախոսվել է 26.11.2019, ընդունվել է տպագրության 13.12.2019:
* The article was presented 08.11.2019, was reviewed 26.11.2019, was accepted to publication 13.12.2019.
* Статья представлена 08.11.2019, рецензирована 26.11.2019, принята в печать 13.12.2019.



րի իրականացման միջոցով: Նոր ու տարածվող մեխանիզմ է նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության հեռավար իրականացումը, որն, ի թիվս այլնի, ենթադրում է ձեռք բերված թմրամիջոցի դիմաց գումարի փոխանցում բանկային համակարգով: Արդյունքում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, ապօրինի հարստացման, կաշառքի և առևտրային կաշառքի, ինչպես նաև բազմաթիվ այլ՝ բանկային գործառնությունների օգտագործմամբ կատարվող հանցագործությունների բացահայտումն առանց բանկային գաղտնիքի նկատմամբ միջամտության՝ առանձին դեպքերում անհնար է:

Մինևույն ժամանակ, բանկային գաղտնիքի պաշտպանությունը բանկային համակարգի արդյունավետ գործունեության և բանկային ծառայություններից օգտվող անձանց մասնավոր շահերի ապահովման երաշխիքներից մեկն է, ինչը նշանակում է, որ հանցագործությունների կանխման, խափանման և դրանց բացահայտմանն ուղղված գործունեության ընթացքում բանկային գաղտնիքի նկատմամբ միջամտությունն անսահմանափակ լինել չի կարող: Հետևաբար, մի կողմից, բանկային գաղտնիքի երաշխավորման, իսկ մյուս կողմից՝ հանցավորության դեմ արդյունավետ պայքարի երկու՝ զուգորդվող խնդիրների համաչափ լուծումն ապահովելու համար քրեական գործով վարույթի ընթացքում բանկային գաղտնիք համարվող տեղեկությունների ստացման վերաբերյալ իրավակարգավորումները պետք է համապատասխանեն հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման սկզբունքին: Նշվածից ուղղակիորեն բխում է, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ձեռքբերման իրավական ռեժիմը սահմանելիս օրենսդիրը պետք է ներդնի այնպիսի կառուցակարգեր, որոնք, մի կողմից, կապահովեն նշված տեղեկությունների բարձր պաշտպանվածությունը, մյուս կողմից՝ չեն ստեղծի անհամաչափ կամ անհաղթահարելի սահմանափակումներ հանցագործությունների բացահայտման նպատակով դրանց օգտագործման համար:

Բանկային և դրան հավասարեցված գաղտնիքի ստացման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգի համակարգային վերլուծության արդյունքում պետք է փաստել, որ այն խնդրահարույց է, չի համապատասխանում նշված պահանջներին և բազմաթիվ դեպքերում հանգեցնում է գործով նշանակություն ունեցող տվյալների ձեռքբերման չիմնավորված անհնարինության՝ գործի քննությունը մտցնելով փակուղի:

Այսպես, «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝

«1. Բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ:

2. Բանկերի վերահսկողության կապակցությամբ բանկերի և դրանց հաճախորդների վերաբերյալ Կենտրոնական բանկին հայտնի դարձած սույն հոդվածի առաջին մասում սահմանված տեղեկությունները համարվում են բանկային գաղտնիք: Բանկերը համարվում են Կենտրոնական բանկի հաճախորդներ»:

Նույն օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

«1. Բանկերը քրեական գործով **կասկածյալ կամ մեղադրյալ** ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրում են միայն դատարանի որոշման հիման վրա՝ սույն օրենս-



քին և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինները քրեական գործով **կասկածյալ կամ մեղադրյալ** ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ստանալ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...) Բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար խուզարկությունը կամ առգրավումը կատարվում է դատարանի որոշման հիման վրա»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ «Ֆինանսական տվյալների մատչելիության ապահովումը և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկումը բանկային կամ այլ ֆինանսական կազմակերպություններից բանկային և այլ տեսակի հաշիվների (ավանդների) վերաբերյալ տեղեկությունների ստացումն է, ինչպես նաև իրականացվող ֆինանսական գործարքների մշտական վերահսկումը առանց այն անձանց գիտության, որոնց վերաբերում են այդ գործարքները»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները (...) կարող են անցկացվել միայն դատարանի թույլտվությամբ»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի վերոշարադրյալ դրույթների վերլուծությունից երևում է, որ նշված օրենքը, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, թույլ է տալիս դատարանի որոշման հիման վրա գաղտնի կերպով ստանալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով որպես կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները:

Անդրադառնալով մեջբերված իրավակարգավորումներին և արձանագրելով, որ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների ձեռքբերման հնարավորությունների առումով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը և «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը հակասություն են պարունակում, ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով «անձնական կյանք» հասկացության կոնվենցիոն մեկնաբանությունը¹, ԱԿԴ/0015/07/13 քրեական գործով իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «(...)կոնկրետ քրեական գործի շրջանակներում մինչդատական վարույթն իրականացնող մարմինը դատարանի որոշման հիման վրա կարող է ստանալ բանկի այն հաճախորդի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, ով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ներգրավվել է որպես կասկածյալ կամ մեղադրյալ: Այլ խոսքով՝ քրեական գործի շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները չեն կարող տրամադրվել հետաքննության կամ նախաքննության մարմիններին: Այս տրամաբանությամբ, նշված մարմիններին չեն կարող տրամադրվել

¹ Տե՛ս NADA v. SWITZERLAND գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 10593/08, կետ 151:



նաև անձանց անորոշ շրջանակի կողմից որոշակի ժամանակահատվածում կատարված գործարքների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները¹»:

Վերոգրյալ իրավակարգավորումներից ակնհայտ է, որ իրավաբանական անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման հնարավորություն նախատեսված չէ, ինչը լրացնելու փորձ է կատարել ՀՀ վճռաբեկ դատարանը՝ թիվ ԵԿԴ/0223/07/14 քրեական գործով կայացրած որոշմամբ փաստելով, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասում ամրագրված դրույթի այն մեկնաբանությունը, որ դատարանի որոշման հիման վրա կարող են ստացվել բացառապես կասկածյալի կամ մեղադրյալի անվամբ բանկային հաշիվների վերաբերյալ տվյալները, օրենսդրական այս դրույթի բովանդակության և կիրառման շրջանակների անհարկի նեղացում է: Նման մեկնաբանությունը չի համապատասխանում քննարկվող դատավարական (քննչական) գործողությունների առջև դրված խնդիրներին, էականորեն սահմանափակում է դրանց՝ քրեական գործով վարույթի համար ունեցած դերն ու նշանակությունը: Արդյունքում, մասնավոր շահը չարդարացված գերակայում է հանցագործությունների բացահայտման (հանցավորության դեմ պայքարի) հանրային շահի նկատմամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասում տեղ գտած «քրեական գործով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ» հասկացության վերլուծությունը վկայում է, որ խոսքը ոչ թե սոսկ կասկածյալի կամ մեղադրյալի անվամբ, այլև նրան մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ին անմիջականորեն առնչվող իրավաբանական անձին վերաբերող բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների մասին է, եթե առկա է հիմնավոր ենթադրություն, որ այդ իրավաբանական անձի գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվել, վերահսկվել կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվել է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից²»:

Մեջբերված իրավական դիրքորոշումները զգալիորեն հստակեցրել են բանկային գաղտնիքի պաշտպանության երաշխիքներն ու դրանց ստացման դատավարական հնարավորությունները հենց հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ հավասարակշռման սկզբունքի տիրույթում՝ նախ, փաստելով, որ օրենսդիրը հնարավոր է համարում բացառապես քրեական հետապնդման ենթարկված անձանց բանկային գաղտնիքի ստացումը, այնուհետև՝ հանուն հանրային շահի մեկնաբանելով, որ քրեական դատավարությունում հնարավոր է ստանալ նաև վերջիններիս վերագրվող արարքներին անմիջականորեն առնչվող կամ նրանց կողմից կառավարվող կամ վերահսկվող իրավաբանական անձանց բանկային գաղտնիքը: Դրանք, սակայն, չեն լուծել և չէին կարող լուծել քննարկված իրավակարգավորումների պայմաններում քրեական գործերով բազմիցս առաջացող մեկ այլ՝ մեղադրյալի կամ կասկածյալի դատավարական կարգավիճակի բացակայության պատճառով բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկություններ ստանալու անհնարինության խնդիրը:

Բանն այն է, որ բազմաթիվ հանցագործությունների բացահայտման կամ դրանց կատարման հանգամանքների ամբողջական պարզաբանման համար անհրաժեշտ է ստանալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն այն դեպքում, երբ հանցագործություն կատարած անձը հայտնի չէ, ավելին, բանկային գաղտնիքն անհրաժեշտ է ստանալ հենց նրան ի հայտ բերելու համար: Օրինակ, անհայտ անձի կողմից փաստաթուղթ հափշտակելուց, կամ այլ անձի տվյալներով կեղծ փաստաթուղթ պատրաստելուց հետո խաբեությամբ՝ կեղծ փաստաթուղթ օգտագործելով բանկից կամ վարկային կազմակերպությունից գումար հափշտակելու դեպքում,

¹ Տե՛ս ԱԿԴ/0015/07/13 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թ. սեպտեմբերի 13-ի որոշում, կետ 19:

² Տե՛ս ԵԿԴ/0223/07/14 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թ. սեպտեմբերի 13-ի որոշում, կկ. 25-26:



վերջինիս բացահայտումը հնարավոր է բացառապես բանկային գաղտնիք հանդիսացող տվյալներ, այդ թվում՝ համապատասխան փաստաթղթեր, գործարքի կատարման ընթացքը պատկերող տեսագրություններ ստանալու պարագայում: Ավելին, այս դեպքերում բանկային գաղտնիք համարվող տեղեկություններն ստանալու անհնարինությունը վարույթն իրականացնող մարմնին թույլ չի տալիս պարզել հանցագործության կատարման մանրամասները, դրան բանկի աշխատակցի ներգրավվածությունը, վերջինիս արարքում հափշտակության օժանդակության կամ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշների առկայությունը:

Բացի այդ, շատ դեպքերում քննությանը պարզվում է, որ կասկածյալ կամ մեղադրյալ հանդիսացող անձինք հանցանքը կատարել են ուրիշ անձանց միջոցով բանկային ծառայություններից օգտվելու եղանակով, օրինակ՝ այլ անձանց անվամբ կեղծ ոսկու գրավադրմամբ, որպիսի պայմաններում գործող օրենսդրական կարգավորումներով բանկային գաղտնիքն ստանալը դարձյալ անհնար է դառնում: Հանցագործությունն ամբողջությամբ բացահայտել հնարավոր չէ նաև անհիմն հարստացման, կաշառք ստանալու գործերով այն իրավիճակներում, երբ, օրինակ, գումարը պահվել կամ փոխանցվել է ոչ թե հանցավորի, այլ մեկ ուրիշի բանկային հաշվին:

Հանցագործության բացահայտումը, հանցավորության, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունը վտանգող՝ մեջբերված իրավակարգավորումների պատճառով առաջացող իրավիճակները բազմաթիվ են, ուստի դրանք բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու դատավարական հնարավորությունների վերանայման և բանկային գաղտնիքի երաշխավորման չիմնավորված ծայրահեղությունները չեզոքացնելու ուղիղ հրամայական են:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության իրավական կանոնակարգմանը, փաստել է, որ այն պետք է իրականացնել այն հաշվով, որ բացառվի դրա երաշխավորման պահանջից ցանկացած կամայական նահանջ՝ հիմք ընդունելով ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, իրավական և ժողովրդավարական պետության սահմանադրական սկզբունքները, մասնավորապես՝ տնտեսական գործունեության ազատությունը և ազատ տնտեսական մրցակցությունը, ինչպես նաև մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը: Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների բացահայտման խնդիրը սերտորեն առնչվում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության ապահովման քրեական դատավարության հիմնաքարային խնդրին: Հիմք ընդունելով քրեական դատավարության այս կարևորագույն խնդրի ապահովման անհրաժեշտությունը՝ բանկային գաղտնիքի պահպանության իրավական ռեժիմը կանոնակարգելիս իբրև ուղենիշ նախ և առաջ պետք է ընդունել անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության սահմանադրական պահանջը: Ըստ այդմ, բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները բացահայտելու օրենսդրական կանոնակարգերը պետք է նախատեսեն համապատասխան երաշխիքներ՝ բացառելու համար նաև պետական մարմինների և պաշտոնատար անձանց հնարավոր կամայական վարքագիծը¹:

Հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման սկզբունքը ենթադրում է, որ մարդու իրավունքներն ու ազատությունները բացարձակ չեն, և կարող են սահմանափակվել, եթե հակակշռվում են ավելի բարձր հանրային շահով: Ինչպես արդեն նշվել է, թե՛ Եվրոպական կոնվենցիան, թե՛ ՀՀ Սահմանադրությունն իրավաչափ են համարում անձի համապատասխան իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակումը ժողովրդավարական հաս-

¹ Տե՛ս ԵԿԴ/0223/07/14 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թ. սեպտեմբերի 13-ի որոշում, կետեր 19, 21:



րակության կարևորագույն արժեքների պաշտպանության համար: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը նույնպես ցույց է տալիս, որ Կոնվենցիայի խախտում չի արձանագրվել բոլոր այն դեպքերում, երբ 8-րդ հոդվածով սահմանված իրավունքները սահմանափակվել են նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավաչափ նպատակների ապահովման համար¹:

Վերոգրյալը ենթադրում է, որ բանկային գաղտնիքի հասանելիության՝ ըստ սուբյեկտի շրջանակի նեղացումը պետք է լինի արդարացված: Ավելի պարզ՝ անհրաժեշտ է հստակ բացատրություն, թե ինչու հնարավոր չէ հանցագործությունների բացահայտման նպատակով ստանալ կասկածյալ կամ մեղադրյալ չհանդիսացող, բայց հանցագործության մեխանիզմին այս կամ այն կերպ առնչվող անձանց, այդ թվում՝ տուժողի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, ինչու է բանկային գաղտնիքի պաշտպանության մասնավոր շահը հենց այս կերպ հավասարակշռում հանցագործությունների, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման հանրային շահին:

Մեր գնահատմամբ, այս հարցի ողջամիտ պատասխան առկա չէ: Բանկային գաղտնիքի մատչելիության սուբյեկտային սահմանափակումը, այսինքն՝ բացառապես կասկածյալի, մեղադրյալի կամ նրանց կողմից կառավարվող կամ ղեկավարվող կամ հանցագործությանն անմիջականորեն առնչվող իրավաբանական անձի բանկային գաղտնիքն ստանալու հնարավորությունը, չի բխում քրեական դատավարությունում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման սկզբունքից և չհիմնավորված առավելություն է տալիս մասնավոր շահին՝ անհարկի սահմանափակելով հանցագործությունների բացահայտման հնարավորությունները:

Բանն այն է, որ մասնավոր կյանքի պաշտպանությունը, որի շրջանակում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ու ՀՀ վճռաբեկ դատարանը դիտարկում են բանկային գաղտնիքի իրավական երաշխավորումը, ոչ միշտ է նույնական երաշխիքներ ու համապատասխանաբար՝ այդ տեղեկությունների մատչելիության սահմանափակումներ ենթադրում: Օրինակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածով թույլատրվում է հեռախոսային խոսակցությունները լսելու միջոցով սահմանափակել անձնական կյանքի գաղտնիքը՝ անկախ անձի դատավարական կարգավիճակից: Այն հանգամանքը, որ օրենսդրորեն սահմանված են այն տեղեկությունները (գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ), որոնք կարող են ստացվել հեռախոսային խոսակցությունները լսելու դեպքում և հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը սահմանափակող գործողությունները կատարվում են դատական վերահսկողության ներքո, բավարար է դիտվում այդ իրավունքի նկատմամբ անհարկի միջամտությունը բացառելու համար:

Բանկային գաղտնիքը բացառապես դատարանի թույլտվությամբ ստանալու վերաբերյալ իրավակարգավորումներն ու ստացվող տեղեկությունների շրջանակի հստակ ամրագրումը ևս ինքնին բավարար երաշխիք են բանկային գաղտնիքի նկատմամբ անհիմն միջամտությունը բացառելու համար: Ավելին, բանկային գաղտնիքի պաշտպանությունը նույն չափանիշների համատեքստում ինքնին անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա է, քանի որ այս դեպքում ստացվող արդյունքն ավելի կանխատեսելի է, այսինքն՝ ավելի հստակ է, թե ինչպիսի տեղեկություններ են ակնկալվում ստանալ, այդ տեղեկությունները ստատիկ են և ոչ թե ապագայում վարվելիք խոսակցությունների արդյունքում են ձեռք բերվելու:

Բանկային գաղտնիքի մատչելիության սուբյեկտային սահմանափակման անընդունելիության մասին հետևությունը հիմնավորվում է նաև միջազգային փորձի վերլուծությամբ:

¹ St' u I.S. v. Germany գործով Եվրոպական դատարանի 2014 թվականի հունիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 31021/08:



Այսպես, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՌԴ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձանց և առանց իրավաբանական անձ կազմավորելու ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող քաղաքացիների գործառնությունների և հաշիվների վերաբերյալ տեղեկանքը, տրամադրվում են վարկային կազմակերպության կողմից իրենց, դատարաններին և արբիտրաժային դատարաններին (դատավորներին), Հաշվիչ պալատին, Ռուսաստանի Դաշնության հարկային մարմիններին, Ռուսաստանի Դաշնության կենսաթոշակային հիմնադրամին, Ռուսաստանի Դաշնության սոցիալական ապահովագրության հիմնադրամին և դատական ակտերի, այլ մարմինների և պաշտոնատար անձանց ակտերի հարկադիր կատարման մարմիններին, դրանց գործունեության մասին օրենսդրական ակտերով նախատեսված դեպքերում, իսկ քննչական մարմնի ղեկավարի համաձայնության առկայության դեպքում՝ նախաքննության մարմիններին՝ իրենց վարույթում գտնվող գործերով:

Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են տրամադրվել միայն դատարանի որոշման հիման վրա: Առանց սուբյեկտի սահմանափակման օրենքով պահպանվող գաղտնիքի տրամադրման իրավաչափությունը հաստատվել է նաև Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի կողմից¹: Բացառապես մեղադրյալի կամ կասկածյալի վերաբերյալ բանկային գաղտնիքը ստանալու հնարավորության մասին նշումներ չկան նաև Ղազախստանի, Բրազիլիայի, Ուկրաինայի, Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքերում:

Խնդրի լուծման նպատակով ՀՀ դատախազության կողմից նախաձեռնվել և բազմակողմանի քննարկումների արդյունքում առանձին փոփոխություններով շրջանառության մեջ է դրվել «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի» նախագիծը², որը, մի կողմից, չեզոքացնելով առկա սահմանափակումները, մյուս կողմից՝ լրացուցիչ պայմաններ է սահմանում բանկային գաղտնիքին միջամտության համար, որոնց համաչափությունն ու անհրաժեշտությունն ինքնուրույն քննարկման առարկա են: Նշված նախագիծով նախատեսվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2 մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«3.2. Քրեական հետապնդում իրականացնող մարմինները ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ստանալ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա:

Դատարանը պատճառաբանված որոշմամբ բավարարում է առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն տալու վերաբերյալ քննիչի՝ հսկող դատախազի համաձայնությամբ և գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի հաստատմամբ ներկայացված միջնորդությունը, եթե ներկայացվել են ծանրակշիռ, քրեական գործի նյութերից բխող վերաբերելի, արժանահավատ և բավարար տվյալներ այն մասին, որ նշված տեղեկություններն անհրաժեշտ են գործով էական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար և դրանք ողջամտորեն հնարավոր այլ եղանակով պարզվել չեն կարող:

¹ Տե՛ս ՌԴ Սահմանադրական դատարանի 17.12.2015թ. թիվ 33-ՎՈ որոշումը:

² Տե՛ս <https://www.e-draft.am/projects/1724/about> (Վերջին մուտք՝ 04.11.2019):



Դատարանի որոշման պատճենը քննիչը ոչ ուշ, քան քրեական գործը սույն օրենսգրքի 272-րդ հոդվածով սահմանված կարգով դատախազին ուղարկելուց 10 օր առաջ ուղարկում է այն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, որի վերաբերյալ ստացվել են սույն հոդվածով նախատեսված տեղեկությունները: Նշված որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան սույն օրենսգրքով սահմանված կարգով որոշման պատճենն ստանալու պահից տասնօրյա ժամկետում»:

Վերլուծելով նախագծով առաջարկվող կարգավորումները՝ կարող ենք փաստել, որ դրանք սահմանում են բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար անհրաժեշտ ընթացակարգային և բովանդակային բավականին խիստ պայմաններ: Մասնավորապես՝

ա) քննիչի պատճառաբանված միջնորդություն, որը տվյալ դեպքում ենթադրում է պատշաճ հիմնավորումներ ոչ միայն բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների՝ գործի համար նշանակության և դրանք ստանալու անհրաժեշտության, այլև այն մասին, որ այդ տեղեկություններն այլ եղանակով ստանալն անհնար է.

բ) նախնական դատախազական հսկողություն և վերահսկողություն. քննիչը նշված տեղեկություններն ստանալու միջնորդություն կարող է ներկայացնել բացառապես դատախազի համաձայնությամբ և գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի հաստատմամբ: Ընդ որում՝ դատախազական հսկողությունը երկաստիճան է, այսինքն՝ ենթադրում է ոչ միայն հսկողություն իրականացնող դատախազի համաձայնությունը, այլև գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի կողմից միջնորդության հաստատում: Դատախազական հսկողությունը պետք է ապահովի քննիչի միջնորդության համապատասխանությունն այն պահանջներին, որոնք անհրաժեշտ են բանկային գաղտնիքը բացահայտելու համար.

գ) նախնական դատական վերահսկողություն, որի շրջանակներում դատարանը պետք է գնահատի, թե արդյոք քննիչի կողմից ներկայացվել են ծանրակշիռ, քրեական գործի նյութերից բխող վերաբերելի, արժանահավատ և բավարար տվյալներ այն մասին, որ քրեական գործով էական նշանակություն ունեցող հանգամանք պարզելու համար անհրաժեշտ է բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների բացահայտում, բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու միակ միջոցն են և դրանք ողջամտորեն հնարավոր այլ եղանակով պարզվել չեն կարող.

դ) դատարանի որոշման վիճարկման հատուկ հնարավորություն. այդ որոշման պատճենը քննիչը ոչ ուշ, քան քրեական գործը դատախազին ուղարկելուց 10 օր առաջ պարտավոր է ուղարկել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, որի վերաբերյալ ստացվել են օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2 մասով նախատեսված տեղեկությունները: Նշված որոշումը շահագրգիռ անձի կողմից կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան որոշման պատճենն ստանալու պահից տասնօրյա ժամկետում:

Նկատի ունենալով նախագծի վերաբերյալ մասնագիտական շրջանակների լայն քննարկումներն ու այդ կապակցությամբ, որպես կանոն, բացասական դիտարկումներն այն մասին, որ նախագիծը չեզոքացնում է բանկային գաղտնիքի պաշտպանությունը, պետք է փաստել, որ նախագծով սահմանված և վերը վերլուծված կարգավորումները ոչ միայն սահմանում են բանկային գաղտնիքի պաշտպանվածության ավելի բարձր շեմ, քան առկա է գործող իրավակարգավորումներով, այլև լրացուցիչ ու երբեմն անհամաչափ բարդացնում են բանկային գաղտնիքի ստացման հնարավորությունը:

Բանն այն է, որ, մի կողմից, վերացնելով բանկային գաղտնիքի մատչելիության սուբյեկտային սահմանափակումները և հնարավոր համարելով ստանալ նաև կասկածյալ կամ մեղադրյալ չհանդիսացող անձանց բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները՝ նախագիծը,



մյուս կողմից՝ հավասարեցնում է այն դեպքերը, երբ անհրաժեշտ է ստանալ քրեական հետապնդման ենթարկված և չենթարկված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տվյալներ և երկու դեպքում էլ սահմանում քննիչի միջնորդությունը հսկողություն իրականացնող դատախազի համաձայնությամբ և գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի հաստատմամբ ներկայացնելու պայման: Ավելին, ի տարբերություն գործող իրավակարգավորումների՝ քրեական հետապնդման ենթարկված անձի բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալը ևս ենթադրում է հիմնավորումներ առ այն, որ այդ տեղեկություններն այլ կերպ ստացվել չեն կարող: Ասվածը վկայում է, որ նախագիծը բազմապատիկ անգամ բարձրացնում է քրեական հետապնդման ենթարկված անձանց բանկային գաղտնիքի պաշտպանությունը, իսկ կասկածյալ կամ մեղադրյալ չհանդիսացող անձանց համար ևս սահմանում անհիմն միջամտությունը բացառող երաշխիքներ:

Վերահաստատելով սույն հետազոտության հիմքը կազմող այն մոտեցումը, որ քրեադատավարական խնդիրների լուծումը չպետք է անհարկի նվազեցնի բանկային գաղտնիքի պաշտպանությունը և պայմաններ ստեղծի դրա նկատմամբ անհիմն միջամտության համար՝ գտնում ենք, որ քրեական հետապնդման ենթարկված և չենթարկված անձանց բանկային գաղտնիքին միջամտությունը չի կարող պաշտպանության նույն մակարդակում գտնվել: Դատարան ներկայացվող բոլոր միջնորդությունները ՀՀ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալների կողմից հաստատելու պայմանը չի կարող համարվել համաչափ և ընդունելի մասնավոր և հանրային շահերի հավասարակշռման տեսանկյունից: Դատախազական վերահսկողության նման գործիքակազմը ոչ միայն անհրաժեշտ չէ, այլև ակնհայտորեն հաշվի չի առնում այդ դատավարական գործունեության ծավալներն ու այն ընդհուպ տեխնիկական խնդիրները, որոնք միանշանակ առաջանալու են դրա արդյունքում: Դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից իրականացվող դատախազական հսկողությունից բացի քրեական հետապնդման չենթարկված անձանց բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու վերաբերյալ միջնորդությունների օրինականության ապահովման միջոց և հետևաբար բանկային գաղտնիքին անհիմն միջամտության դեպքերի բացառման բավարար երաշխիք կարող է հանդիսանալ այլ վերադաս դատախազների կողմից այդ միջնորդությունների հաստատումը: Իսկ կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձանց բանկային գաղտնիքն ստանալու վերաբերյալ քննիչի միջնորդությունը հսկող դատախազից բացի, նաև վերադաս դատախազի կողմից հաստատելու պահանջը ևս չափազանցություն է:

Անդրադառնալով շահագրգիռ անձին որոշման պատճենն ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերաքննիչ դատարան բողոքարկելու հնարավորություն նախատեսելուն՝ հարկ ենք համարում նշել, որ նմանատիպ կարգավորումն, ըստ էության, ենթադրում է քրեական գործով ձեռք բերված ապացույցի թույլատրելիության վիճարկում՝ մինչև քրեական գործի, ըստ էության, դատարանում քննվելը, ինչը որևէ կերպ արդարացված համարվել չի կարող, քանի որ դատաքննության ընթացքում այդ ապացույցը հետազոտելով՝ դատարանն ի վերջո պարտադիր գնահատելու է դրա թույլատրելիությունը: Միաժամանակ, գործնականում բողոքարկման տվյալ ինստիտուտը կարող է հանգեցնել մի շարք այլ խնդիրների, ինչպիսին, օրինակ՝ միևնույն հարցի վերաբերյալ զուգահեռ դատական գործընթացներն են: Այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ նախագիծով հնարավորություն է տրվում ստանալ կասկածյալ կամ մեղադրյալ չհանդիսացող անձանց բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, ուստի գտնում ենք, որ այդ անձանց, եթե նախաքննության ավարտման պահին ևս չեն հանդիսանում մեղադրյալներ, պետք է տրվի բողոքարկման հնարավորություն:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է փաստել, որ կասկածյալ կամ մեղադրյալ չհանդիսացող անձանց բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն ստանալու բացարձակ արգելքը



չի համապատասխանում քրեական դատավարությունում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման սկզբունքին և այդ տվյալներն ստանալու ու դրանց հիման վրա հանցագործությունը բացահայտելու անհնարինություն է առաջացնում այնպիսի դեպքերում, երբ հանցավորության դեմ պայքարի հանրային շահն ակնհայտորեն վեր է բանկային գաղտնիքի պաշտպանության մասնավոր շահից: Այդ առումով, լուծելով վաղուց առկա խնդիրը, այն է՝ չեզոքացնելով այդ սահմանափակումը և միաժամանակ սահմանելով բանկային գաղտնիքի նկատմամբ անհիմն միջամտությունը բացառող բավարար երաշխիքներ՝ նախագիծը, մյուս կողմից, չհիմնավորված կերպով հավասարեցրել է քրեական հետապնդման ենթարկված ու չենթարկված անձանց համար սահմանված երաշխիքները՝ որպես այդպիսին նախատեսելով նաև դատախազական վերահսկողության անհամաչափ բարձր մակարդակ, որի ապահովումը դժվարություններ է ենթադրելու՝ հանգեցնելով քրեական գործերի քննության նոր խոչընդոտների:

Հետևաբար, գտնում ենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2 մասի 2-րդ և 3-րդ պարբերությունները պետք է շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Դատարանը պատճառաբանված որոշմամբ բավարարում է առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն տալու վերաբերյալ քննիչի՝ հսկող դատախազի համաձայնությամբ և վերադաս դատախազի հաստատմամբ ներկայացված միջնորդությունը, կամ քննիչի՝ հսկող դատախազի համաձայնությամբ և կասկածյալի կամ մեղադրյալի վերաբերյալ ներկայացված միջնորդությունը, եթե ներկայացվել են ծանրակշիռ, քրեական գործի նյութերից բխող վերաբերելի, արժանահավատ և բավարար տվյալներ այն մասին, որ նշված տեղեկություններն անհրաժեշտ են գործով էական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար և դրանք ողջամտորեն հնարավոր այլ եղանակով պարզվել չեն կարող:

Դատարանի որոշման պատճենը քննիչը ոչ ուշ, քան քրեական գործը սույն օրենսգրքի 272-րդ հոդվածով սահմանված կարգով դատախազին ուղարկելուց 10 օր առաջ ուղարկում է իրավաբանական անձին կամ մեղադրյալ չհանդիսացող ֆիզիկական անձին, որոնց վերաբերյալ ստացվել են սույն հոդվածով նախատեսված տեղեկությունները: Նշված որոշումը կարող է բողոքարկվել վերաքաննիչ դատարան՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով որոշման պատճենն ստանալու պահից տասնօրյա ժամկետում»:

Annotation. By analyzing the regulations of the RA Criminal Procedure Code, European and interstate judicial practice the authors have concluded that the absolute prohibition of access to bank secrecy information of persons who aren't suspected or accused doesn't comply with the principle of balancing public and private interests in criminal proceedings. This makes impossible to obtain such bank information and on the basis of that information to disclose a crime in those cases where the public interest of combating crime is obviously above the private interest of protecting banking secrecy.

Аннотация. Авторы, анализируя правовые нормы Уголовно-процессуального кодекса РА, европейскую и внутригосударственную судебную практику, приходят к выводу, что абсолютный запрет на доступ к банковской тайне лиц, не являющихся подозреваемыми или обвиняемыми,



не соответствует принципу балансирования государственных и частных интересов в уголовном процессе. Такой запрет создает невозможность получения банковских сведений и на их основе раскрытия преступлений, в таких случаях, в которых публичный интерес борьбы против преступлений очевидно превалирует над частным интересом защиты банковской тайны.

Հիմնարարներ՝ բանկ, բանկային գործ, բանկային գաղտնիք, մասնավոր կյանք, գաղտնի տեղեկատվություն:

Key words: bank, banking activities, banking secrecy, private life, secret information.

Ключевые слова: банк, банковское дело, банковская тайна, частная жизнь, секретная информация.